էին պարսից կառավարութեան եւ իրենց պետութիւնների անունից ուղղակի պահանջում, որ ստիպեն հայերին կաթոլիկ դառնալու։ Նրանք պնդում էին, որ Պապի իշխանութիւնը չընդունող քրիստոնեաների ներկայութիւնը Պարսկաստանում վիրաւորական է իրենց եւ իրենց պետութիւնների համար։

Ահա առիթը՝ նոր հալածանքների, նոր խստութիւնների, նոր բռնութիւնների ընդդէմ հայ ժողովրդի։

Չնայած այդ ամենին, կաթոլիկ միսիոնարները շատ քիչ յաջողութիւն ունէին իրենց գործունէութեան մէջ։ Ճիշդ է, նրանց յաջողւում էր յուզմունք առաջացնել, աղմուկ եւ պառակտում ձգել մեր կեանքում. յաջողւում էր կառավարական նորանոր ճնշումներ հանել տալ հայութեան դէմ, բայց պոկել լուսաւորչական հայերին զանգուածօրէն իրենց եկեղեցու գրկից եւ կաթոլիկացնել — այդ նրանց չէր յաջողւում։ Ապացոյց, որ նրանց գործունէութեան կենտրոններում — Երեւան, Նախիջեւան, Ջահուկ, Գողթան — այսօր մի հատ էլ հայ կաթոլիկ չկայ։ Նրանք իրենք էլ զգում էին իրենց անզօրութիւնը եւ իրենց անյաջողութիւնը վերագրում էին սատանային։ «Սատանան, որ միշտ թշնամի է հաւատի յառաջադիմութեան, իր բոլոր ջանքերը գործադրում է աւերելու մեր այնքան յոյսերը» — գրում էր Հայաստանում գործող քարոզիչներից մին իր զեկուցման մէջ (Եղեան, «Պետրոս Մեծի յարաբերութ. 15)։

Այս երեւոյթը — հայերի անդրդուելիութիւնը իրենց կրօնի մէջ — զարմանք էր պատճառում այն ժամանակներում Հայաստան այցելող բոլոր եւրոպացի ճանապարհորդներին։ Օրինակ, Շարդէնը այդ մասին գրում է «Դէպի Պարսկաստան եւ Արեւելք» աշխատութեան մէջ. «Մի զարմանալի եւ եթէ կ'ուզէք՝ մի հրաշք բան է, որ հայերը, լինելով 11 դար մահմեդական լծի տակ, լինելով աղքատ եւ տգէտ, ինչպիսին կարող են լինել այդպիսի ստրկութեան մէջ գտնուող ժողովուրդները. բայց չնայած դրան, նրանց հաւատը անդրդուելի է։ Նրանք հաւատարիմ են իրենց կրօնին, առանց կամենալու որդեգրել մէկ ուրիշը. ուստի հաւասարապէս դիմադրում են ե'ւ իրենց մահմեդական տէրերի հալածանքներին, ե'ւ հռոմէական եկեղեցու միսիոնարներին։ Հռոմէական եկեղեցին, աւելի քան 2 դարից ի վեր, իր քարոզիչների միջոցով աշխատում է նրանց բերել իր դաւանութեանը։ Դժուար է թուել այն հնարներն ու ծախսերը, որ Հռոմը գործադրեց այդ նպատակի համար — սակայն ապարդիւն» (Եղեան, նոյն տեղ, 18)։

Հայոց դժբախտ կաթողիկոսներն էլ շարունակ մտահոգուած էին, թէ ինչպէս կարողանան պաշտպանել իրենց հօտը այդ վայրի գազաններից։ Միջոցներից մէկն էր՝ դիմումներ անել Պապերին եւ նկարագրելով երկրի ծանր դրութիւնը, քարոզիչների կատարած վատ գործերը, խնդրել, որ նրանք՝ Պապերը՝ զսպեն միսիոնարներին, ենթադրելով միամբ-տօրէն, թէ այդ ամէնը նրանք անում են առանց Պապերի գիտութեան։ Բնական է, որ այդ նամակների մէջ կաթողիկոսները չպիտի մոռանային յարգանքի սովորական արտայայտութիւնները Պապերին եւ պիտի խօսէին քրիստոնէական միութեան ու եղբայրութեան անունից։

Դժբախտաբար, այս հանգամանքն էլ կաթոլիկ հոգեւորականութիւնը դարձնում էր իր ձեռքում մի զէնք՝ հայոց եկեղեցու դէմ պայքարելու համար։ Կաթոլիկ պատմագիրները — որոնց թւում նաեւ Հ. Մ. Զամչեան — այդ դիմումները միշտ նկատել են հպատակութեան փորձ հայոց եկեղեցու պետերի կողմից Հռոմի աթոռին։

Նման երկու նամակ էլ գրել է Աղէքսանդր Զուղայեցի կաթողիկոսը, որոնցից մէկը — գրուած 1709 թ. — յիշում է Զամչեանը եւ քաղուածներ բերում նրանից իր Հայոց Պատմութեան մէջ (Գ. եր. 749), իսկ միւսը, որ գրուած է 1711 թ. ապր. 16-ին, տպուած է «Փարոս» ամսագրում (1873 թ. տետր. Բ.), որի մանրամասն բովանդակութիւնը բերում է Կ. Եղեանը իր՝ «Պետրոս Մեծի յարաբերութիւնը հայ ժողովրդի հետ» երկասիրութեան մէջ։

Ըստ Զամչեանի՝ այդ նամակը (1709-ին գրուած) «դիր սիրոյ եւ յարգութեան» է եւ ընդհանուր տպաւորութիւնն այնպէս է, որ Աղէքսանդր կաթողիկոսը իր հպատակութիւնը